

ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ՆԱԽՆՅԱՑ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ. ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ ԵՍԱՅԱ ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ*

«Իմ դատաստանը հեթանոսների լույսն է» (ԾԱ 4)։ Սա իսկ լուսավորեց նրանց. իմանալ դատաստանը և ի մտի ունենալ իրավունքը։ Տեսնո՞ւմ ես դատաստանի շահը, քանզի խավարը փախավ, երկյուղը մերժվեց, ցանկության կարիքը փախստական եղավ։ Ինչպես· երբ դատավոր է երևան գալիս, գողերին, ավազակներին, գերեզմանակրկիտներին և ամեն տեսակ չարագործների հալածում է, այնպես էլ մտքի ընտրությունը. երբ կրկին վերստանում է իր զորությունը և, բարձրանալով, նստում ատյանի աթոռին, ամեն վնասակար (բաները) հալածում է, և ամենայն օգտակարը՝ համբույրով ընտանի դարձնում։ Կամ թե. չի՞ տեսնվել մի քաղաք, ուր դատավորը նստած է ատյանում. ինչ աչի մեջ կլինի քաղաքը, (աչի մեջ կլինեն) ոչ միայն վնասարարները, այլև նրանք, որոնք խղճի մտոք չեն (առաջնորդվում)։ Նույնպես և միտքը. երբ առողջ է, ինչպես դատավոր, բարձրանում ու նստում է ատյանի աթոռին, ապա, այնուհետ, աչն ու երկյուղը, որ մինչ այդ անգործության էին մատնված, շտապում են իրենց գործին։ Եվ ոչ միայն չար խորհուրդներն են հանդիմանվում, այլև՝ մտքի բարքը, որ վնասակար չէ, դողում և սարսում է։ Ինչպես, օրինակ, երբ Աստված է դատում, աստղերն անգամ մաքուր չեն նրա առջև։ Նույնպես և միտքը, երբ ինքն իրեն դատավոր է լինում և, պատշաճ ամբաստանությամբ, հանցանքի հատուցումն է պահանջում, չկա մի բան, որ կարողանա նրան արդարացնել։

Եվ հիրավի այդպես է կամենում, որպեսզի մեր անձերը դատապարտենք։ Սակայն չհամարձակվես և չհոժարես մտքի խիղճը վրդովել, և քննել քո բովանդակ կյանքը, որ, բազում մեղքեր գտնելով, հալածվես։ Եվ գիտեմ,

---

* Իբրև ճաշակ հարախոսական գրականության, աշխարհաբար թարգմանությամբ ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում հատվածներ տիեզերական եկեղեցու բազմաբեղուն մշակներից մեկի՝ Ս. Հովհան Ոսկեբերանի (344/54—407 թթ.) Եսայու մարգարեության մեկնությունից։ Հունարեն բնագրով մեզ հասել է Եսայու մարգարեության միայն առաջին ութ գլուխների մեկնությունը։ Մնացյալ 56 գլուխների մեկնությունը աշխարհին այսօր հայտնի է հայերեն թարգմանության շնորհիվ, որն իրականացվել է Ե դարում։

Թարգմանությունը կատարվել է հետևյալ հրատարակությունից. «Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց» (հրատ., Հ. Թադէոս վ. Թորնեան), Վիեննա, 1893, էջ 235—243։

Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

որ շատերն իսկ ախտանում են այսպիսի ախտով. նույնիսկ իմ (օրինակով) գիտեմ նաև այլոց. քանզի ես իսկ բազում անգամ կամեցա մոռացել իմ կեցաց վարքի մասին և անաչառությամբ քննել այն, բայց չհամարձակվեցի, որպեսզի բազում տրտմությունների մեջ չընկղմվի միտքս: Քանզի, եթե կարողանանք հարց ու փորձով վանել մեղքերը, և նույնիսկ ամբողջովին ջնջել մեղքերի հիշատակը, հիրավի (շատերը) կձգտեն դրան: Իսկ եթե մերթ խոշտանգենք մեր միտքը և մերթ ծուլանանք, ի՞նչ կշահենք գրվածներից:

Եվ ինչ օգուտ ունի, ասում են, մոռացել, բայց առավել տրտմություն շահել, քանզի այստեղ մեր միտքն ենք ուտում և այնտեղ՝ պատիժ կրում: Սակայն ասում եմ, որ օգուտ կա տրտմությունից ևս, քանզի, եթե մոռացելով տատամսես, անվճռական կլինես մյուս անգամ այդպիսի բաներ մոռաբերել: Եվ ոչ այնչափ միայն. այլև Աստուծո ևս կաղաչես հավանություն տալ ըստ այն (խոսքի), թե «խոստովանիր դու նախ քո անօրինությունը, որպեսզի արդարանաս» (ԽԳ 26): Քանզի եթե ասելը (խոստովանելը) արդարացնում է, որչափ ավելի՝ տատամսելը: Ոչ մի բան այնքան չի օգնում հանցավորին, որքան, երբ նա մշտապես աչքի առջև և մտքում իր մեղքն ունի և հաճախ դողում ու անձն է խոշտանգում. ոչ մի բան մեզ Աստուծո հետ այնպես շուտ չի հաշտեցնում. ոչ պահքը, ոչ գետնատարած անկողինը, ոչ հսկումը և ոչ էլ նման բաները. սրա ապացույցը (Ս.) Գիրքն է: «Ասացի, ասում է, կպատմեմ մեղքերս և դու կթողնես իմ բոլոր մեղքերի ամբարշտությունը: «Ասացի» ասում է. տեսնո՞ւմ ես ինչ զորություն կա նրանում. թե «Ասա դու նախ քո անօրինությունը, որպեսզի արդարանաս» (ԽԳ 26): Միթե՞, երբ դու ինքդ չես կամենում հիշեցնել (մեղքերիդ մասին), Աստված չգիտի՞, միթե՞ (նա) չունի ամենագետ գիտություն, որով (մեր) բոլոր գործերը գրված ունի իբրև մի գիրք:

Այլ ասում են. գեթ այս աշխարհի թշնամանքը չշահենք, որպեսզի ծաղր ու ծանակ չլինենք: Բայց այսպես խորհելով ոչ այստեղի թշնամանքը կարող ես խափանել և ոչ էլ այնտեղի շահից օգտվել:

Վա՜յ ոչ միայն նրան, որ ամբաստանում է իր Արարչին, այլև՝ նրան, որ հոխորտում և իրավունք է վերապահում իրեն (Տիրոջից) կատարվելիք բաների մասին պահանջել: Ես քեզ ստեղծեցի, և դու ինձանից իրավո՞ւնք ես պահանջում. քանզի, եթե չկամենայի, նույնիսկ չէիր էլ լինի: Միթե՞ կարող է կավը բրուտին ասել. ի՞նչ ես անում, ինչու չես գործում, և գործն էլ, թե՝ ձեռքեր չունե՞ս դու: Սա ասում է նրանց, որ բամբասում են Աստուծո երկայնամտությունը, թե՝ Աստուծո պետք էր այս անել կամ այս ինչը պետք չէր: Առավել ամբարշտագույն բան չկա, քան օրենքի (տակ) դնել դատավորին և ամենագործ բնությունը մարդկային (սահմանափակ) մտքով բամբասել: Թեպետև չկա այդպիսի օրինակ, քանի որ բրուտը ոչ թե կավի նյութի ստեղծիչն է, այլ, (իր) կարողության չափ, միայն ստեղծվածի (կերպավորողը: Իսկ Աստված ոչ միայն քո պատկերի արարիչն է, այլև՝ այն նյութի, որից ստեղծվել ես: Կավը ոչ թե իր գոյությունը, այլ բրուտից իր կերպարանքն է միայն ստանում, և ամենևին չի հակառակում ու չի ընդդիմանկայում (նրան). իսկ դու, որ ամբողջապես Աստուծով կաս, նստած հաշիվ ես պահանջում նրանից: Կավը դիմադարձ չի լինում, քանզի անբարբառ է, իսկ դու դիմադարձ ես լինում ինչի՞ շնորհիվ. այն բանի, որ խոսունա՞կ ես· պարգևովդ պարգևատուի դեմ ես կռվում: Ինչո՞ւ խորամուխ չես պատճառի մեջ, որպեսզի զերծ մնաս ընդդիմակայումից. քեզ արարել է որպես

խոսուն, իմաստուն ոչ թե (այն բանի համար, որպեսզի) առավելությամբդ դիմադարձ լինես Տիրոջը, այլ՝ որպեսզի նրան փառավորես և նրանից օրհնվես, ոչ թե քնես և հարց ու փորձ անես: Լեզու ես առել փառատրության համար, միտք ես առել գոհության և հավատքի համար: Կավն անխոս է. քանզի եթե ճանաչեիր Արարչին, թերևս կիմանայիր, որ կավից ավելի անարգագույն և անձայնական ես:

Եվ տես, թե ինչ պատեհ ժամանակի է ասում, երբ արձակվելու էր (գերությունից), որպեսզի չկարծի, թե գործը չի կարող ավարտի հասցնել, և այս պատճառով այնպիսի խոսքեր է մեջբերում: Եվ կարծում է, թե վշտերի մեջ է թողնված, և (Աստված) վշտերից չկարողացավ փրկել (իրեն). այդպիսի խորհուրդներով է խաբվում: Իսկ նա, ահավասիկ, փրկության ժամին լռեցնում է (նրանց), որպեսզի իմանան, որ (դեպքերի) վայրիվերո ընթացքը ((Աստուծո) անքննին և անճառ իմաստության գործն էր, և պետք չէ բամբասել ու մեղադիր լինել և կամ հետազոտել և քննության առնել:

Եվ միայն այնչափ չէ, ինչպես կավի և բրուտի միջև, Աստուծո և քո միջև եղած տարբերությունը: Քանզի բրուտը կավի ստեղծողը չէ, այլ՝ միայն (նրա) կերպարանքի: Եվ նրանք խիստ մոտ են իրար. քանզի կավը և բրուտն արարած են, իսկ քո Արարիչը անարար է և դու՝ արարած:

*

* *

«Ամբարիշտները խաղաղություն (ուրախություն) չունեն» (ԽԸ 21): Եվ հանրահայտ է, որ չունեն անվախճան, անթառամ և ճշմարիտ ուրախություն, քանզի ինչպես Աստված անվախճան է, այնպես էլ նրա (տված) ուրախությունը, որ անեղծ է, միշտ բխում է, միշտ ծաղկում և փթթում: Այնպիսի ուրախությունից անմասն են ամբարիշտները. չասաց թե՝ «ուրախ չեն», այլ թե՝ չունեն իսկական ուրախություն: Ինչպես օրինակ, երբ աղքատներից ոմանք ասում են, թե նրանք չեն կարող հարստանալ, քանզի չիք հնար: Քանի որ մարդիկ, որ մշտապես մեղքի մեջ են և, խղճի չարչրկումով, միշտ ահ ու սարսափի մեջ, հարատևորեն մահվան մահով են մեռնում. և մանավանդ պետք չէ այն նույնիսկ մահ անվանել, քանզի առավել դժնդակ է, քան մահը: Մահը չարիքի լուծումն է, որ, կապված լինելով մեզ, հոգին ձերբազատում է մարմնի շղթաներից, որովհետև, երբ արձակում է նրան, նաև հոգսերն է դրանով փարատում: Անօրեն վարքը ևս աղետների պատճառ է, քանզի երկարեցնում և առավել սաստկորեն բորբոքում է ցավերը, յուրաքանչյուր ոք իր կապանքների մեջ է թակարդվում, քանզի թակարդումը չար ընթացքից է լինում:

Կան և այլ, առանց մեղքի իսկ, վշտագին կյանքեր. կերակրվելու հոգսեր, հիվանդության տրտմություններ, վնասներ, անկումներ, զրպարտություններ, նենգություններ, ժամանակին և անժամանակ տխրություններ և այսպիսի այլևայլ (հոգսեր), իսկ երբ մեղքը ևս, իբրև դժնդակ և անհամբույր գազան, կանգնում է սրանց կողքին, այլևս չի լինում միսիթարություն: Տե՛ս, թե ինչպես էր շրջում Կայենը՝ տատանվելով և երերալով: Եվ արդ. անհանճարների՞ն է հարկ ճառել, անհույսների՞ն, որ թեպետ մարդիկ են, սակայն քարերից ավելի անզգա են, որ միտք ունեն, բայց չեն վայելում միտքը: Քանզի չարիքի խորխորատն են միշտ մղում և գցում իրենք իրենց անձերը, և, մոլորության մեջ գլորված ընկած, նրանց թվում է, թե կանգուն են: Այդպիսիների մասին ասվում է. «Ուրախություն չունեն ամբարիշտնե-

ը»: Եվ արդարև չունեն, քանզի ցավով և տառապանքով է նրանց կյանքը, թե՛ մեկուսի լինելիս և թե՛ուրիշների պատժվելը տեսնելիս. այլոց պատժի մեջ իրենց անձերին սպառնացող աղետն են տեսնում: Ինչպես, օրինակ, առաքինությանը հետամուտ եղողները, երբ ինչ որ բարի (լուր) են լսում, ուրախանում են. իսկ նրանք Ս. Գիրքը չեն կարող ունկնդրել, քանզի անկար են իրենց պատուհասի մասին լսել. թեպետ Ս. Գիրքը հայտնապես չի պատժում չարը, սակայն, երբ նա սպառնում է հանցավորներին, և նրանք լսում են այս մասին, իրենց միտքն ու մարմինն են ուտում. և թեպետ հանկաև հանվանե չի պատժում, բայց և, ընդհանուրին սպառնալով, ձաղում նրանց: Իսկ հանցավորը երբ լսում է սրա մասին, ի մտի առնելով վերքը, գնում է: Քանզի խոցված միտք (կորցնում է իր հանցավոր) վճռականությունը և դա տևում է մի որոշ ժամանակ, ու խիղճը հանցանքի հաշիվն է պահանջում, երբ անաչառությամբ է խորհում: Իսկ երբ մեղավորին եկեղեցի և թատրոն, հարսանիք և կամ զվարճավայր տանենք, և չմխիթարվի, ինչպե՞ս վարվենք: Ինչպես, օրինակ, չարախտավոր հիվանդներին տհաճ է, երբ նրանց տանում ենք աղբյուրների, գետերի կամ ճահիճների մոտ, (որով) առավել ուժգին է այրվում նրանց որովայնը, քանզի այդ ախտը իրենց որովայնում է: Իսկ եթե մահվան մասին նրանց ասես, թե երբ են մեռնելու, այդ ևս առավել մեծ աղետների և մեծ չարիքի (տեղիք կտա): Երբ հարսանիքից դուրս գան, տանջանքի պիտի մատնվեն և պատժվելու հրաման պիտի (տրվի նրանց): Իսկ արդ. այնտեղ չե՞ն լինելու արդյոք առավել մեծ ցավեր, սահմոկելի արհավիրքներ և սարսափներ:

«Ամբարիշտներն ուրախություն չունեն» ասում է Տերը: Երբ Աստված է ասում, այլևս թերահավատ մի եղիր. վճռեց, թե «չունեն ուրախություն». սրա մեջ, եղածից ավելի, ուրիշ բան մի տես: Երբ տեսնես ջերմով բռնված ոմանց, որոնց առջև դրված են պես-պես ըմպելիքներով կամ զովացուցիչ օշարակով լի գավաթներ և բաժակներ, պես-պես կերակուրներով և համադամ խորտիկներով ծանրաբեռն սեղաններ, միթե՞ լավ կհամարես ախտացյալ (հիվանդի) վիճակը: Թեպետև ճաշակեն խորտիկներ, այնժամ է՛լ ավելի կտանջվեն, քանզի կերակուրը սաստկացնում է ջերմության տապը: Նույնպես և դու· երբ կտեսնես մի մեղավորի, որ մեծարվում է հացկատակների կողմից, փառաբանվում իրեն հաճոյացող և շողոքորթող սպասավորներից: Երբեք երանի մի տուր բազմախորտիկ սեղաններ վայելողներին, տեսակ-տեսակ յուղերով օծվածներին, պես-պես զարդերով պաճուճվածներին, այլ սգա, լաց և հոգոց հանիր, քանզի դրանք ոչ այլ ինչ են, բայց եթե մեղքերով բորբոքված հրո կերակուր: Քանզի այն է՛լ ավելի է մեծացնում ցավը և հոգիներին պատճառում ծանրություն ու տաղտուկ, քանի որ հենց դրանով է հարստությունը դառնում խայծ: Եվ, եթե կամենում ես, սրա կողքով հարևանցի չանցնենք: Երբ տեսնես քաղաքների գլխավորներին՝ գեղեցկամարմին, հաղթանդամ, խոր ծերության մեջ՝ զվարճացող, որդիներով, թոռներով՝ բերկրող, ուրախալից խրախճանքի մեջ, առանց տրտմության՝ անհոգ, երջանկության մեջ՝ երանելի, այնժամ նրանց է՛լ ավելի լալու և արտասուքի արժանի համարիր. որովհետև (նրանց) հոգիները ներքին մեղքերի հրով են բորբոքվում: Քանզի մեղքերը սովոր են (անհոգ) բարեկեցության մեջ աճել և ցավերով ու վշտերով՝ նվազել: Իսկ երբ մեկը մեղավոր է և անհոգ ու հեշտական կյանքի մեջ՝ այն հավելում է (մեղքի) ցավերը: Եվ շատերին գիտեմ, որ անասունների նման անխոս են և այսպիսի կյանքի են ձգտում և ասում, թե՝ «կամենում եմ նույն այդ կյանքով ապրել և նույն ախ-

տով ախտանալ»: Եվ սա առավել տաժանելի է, որովհետև (իրենց) ցավերն իսկ չեն զգում:

[ՎԱՍՆ ԻԻՂՈՅՆ ՍՈՒՐԲ ԱԻԾՈՒԹԵԱՆ]

Ինչպես հայտնի է, Ելից գիրքը պարունակում է թանկագին մի վկայություն օծման սրբազան յուղի պատրաստման մասին (Ելք Լ 22—26): Ներկայացվող բնագիրը Աստծո կողմից Մովսես Նախամարգարեին տրված յուղի պատրաստման դեղատոմսի խորհրդական մեկնաբանությունն է: Հեղինակը սրբազան յուղի բաղադրատարրերը նմանեցնում է այս կամ այն նախահոր գլխավոր առաքինությանը. զմուռսը՝ Աբելի արյան հեղումին կամ զոհաբերվելուն, կինամոնը՝ Ենովքի հոգևոր արթնությանն ու զգոնությանը, խունկը՝ Նոյի արդարությանը, խիրիկը (հիրիկը)՝ Աբրահամի հավատքին: Ուրիշ խոսքով, բաղադրատարրերից յուրաքանչյուրը հիշատակված առաքինությունների արտահայտությունն է, որ օծման ժամանակ և նրանից հետո դառնում է նյութականով դրսևորվող հոգևոր իրողություն: Օծության հինկտակարանային այս նշանակությունը Նոր Կտակարանում, պահպանելով իր նախնական իմաստը լիալրվում է նորորակ բովանդակությամբ՝ շնորհով, որի բացարձակ դրսևորումը Քրիստոս-Օծյալն է:

Միավորս հրատարակվում է ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 1443 (թերթ 133բ—134բ) ձեռագրի: Խորագիր չունի: Ուղղագրությունը բերված է միօրինակության (օ=աւ, և=եւ):

Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

«Առ քեզ խունկս անուշունս ծաղիկ ընտիր զմռնեաց ԵՃ (500) սկեղ, եւ կինամովն ԲՃ եւ Ծ (250) եւ խունկս եղեգնեա անոյշ ԲՃ եւ Ծ (250), եւ խիրիկ ԵՃ (500), ըստ սրբութեան եւ իւղս ի ձիթենեաց հիմանաւ միով: Եւ արասցես յիւղ յաւծումն սրբութեանցն եւ ղեփեալ ըստ արուեստի եւղագործացն: Եւ յաւծումն սրբութեանց եղիցի»[1]: Եւ մի այլ ումեք ի Ե (5) նիւթոյ գոյացեալ իւղն ըստ կարգի հարցն առաջին արդարութեան: Աբել՝ ծաղիկ զմռ[ն]եաց ծաղկաձեւ արիւն նորա հեղաւ: Կինամոն անուշ աւրինակ ունի արթնական վարուցն Ենովքա: Զկինամոն ասեն, թէ ոք ի քուն թանձրացեալ են իբրեւ զարթնոյ տայ խաւսել եւ հարցման առնել պատասխանի որպէս Ենովք ի ժամանակի մեղաց թմրութեան թանձրութեան բնութեանս մերոյ, այլեւ եռանդան ցրտացուցիչ է, զի եռանդնոտ հնոց, այսինքն է՝ զբանսարկուին, որ արկանէ ի հոգի եւ ի մարմին. զայս ողջախոհն Ենովք բացատրեաց զխորհուրդս բանսարկուին ի մտաց եւ զցանկութիւն հեշտասիրութեան, ի մարմնոյն նմանեաց զուարթնոց երկնից, որք ոչ ունին զեռանդն արեան եւ մարմնոյ: Խունգն եղեգնեայ՝ Նոյի անուշակ արդարութեան նշանակ, որ հոտոտեալ Տէր Աստուած վկայեաց նմա, ասէ. «Զքեզ տեսի արդար յազգիդ յայդմիկ»[2]: Խիրիկ ԵՃ (500) սկեղ զհաւատոցն Աբրահամու նշանակէ, ի Ե (5)՝ շարժմանց զգայութեանց: Իսկ իւղն ձիթենեաց՝ աւրինակ Մովսիսի աւրինադրութեանցն, վասն զի զճաճանչ* լուսոյ յինքեան բերէ ձեթն լուծիչ

[1] Ելք Լ 22—26:
[2] Ծնն. Է 1:
* ձեռագրում՝ զճաննանց:

գիշերոյ, նոյնպէս եւ աւրինադրութիւն նորա ի խաւարէ կռապաշտութենէ ի լոյս էած զորդիսն Իսրայէլի ըստ այնմ՝ Ճրագ է պատուիրանն եւ լոյս եւ կեանք, այլ է ճրագն ճաճանչաւոր** կարապետն, որ իւղովն աւծութեան եկն, քանզի ի Մովսիսէ սկսաւ, որով աւծաւ Ահարովն եւ զորդիս նորա ի քահանայութիւն եւ ի թագաւորութիւն եկն լուսատու ձիթովն մինչեւ ի Յովհաննէս. զի որպէս խառնուածն ըստ իւրաքանչիւր անուանցն յանուն եւղոյն կատարի, նոյնպէս եւ ամենայն աւծեալքն ի Մովսիսէ եւ յԱհարովնէ յաւրինակատարի, նոյնպէս եւ ամենայն աւծեալքն ի Մովսիսէ եւ յԱհարովնէ յաւրինակ անշառաւիղն Յովհաննէս կատարեցաւ: Ի հինն այնչափ իսկ ի նորս գլխաւոր՝ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս. որպէս արեամբն Աբելի ծաղկաձեւ եւ արթնական վարուքն Ենովքայ եւ, ըստ Նոյի, խունկ անուշ արդարութեան, որով լցան տիեզերք: Խիրիկ ըստ Աբրահամու առ ի հաւատալն ի Տէր, յորում մենքեան հաւատովք արդարանամք, ըստ այն թէ. «Եւ մեք ի Քրիստոս արդարանամք հաւատովք»[3]: Իսկ իւղն աւծութեան՝ լուսատու ճրագ աւրինացն ըստ մարգարէութեան եւ քահանայութեան եւ թագաւորութեան Մովսիսի եւ Ահարովնի եւ Յովհաննու Մկրտչի աւրինակ, զի սոքա են աւծեալ: Եւ զայս ի յինքեանս գլխաւորեաց Քրիստոս, որ թարգմանի Օծեալ եւ Մարգարէ, ըստ այնմ թէ՝ «Մարգարէ յարուցէ ձեզ Տէր Աստուած ձեր»[4], եւ Թագաւոր, ըստ այնմ՝ «Աստուած Թագաւոր մեր յառաջ քան զյաւիտեանս»[5], եւ Քահանայ, ըստ այնմ թէ՝ «Քրիստոս եկեալ Քահանայ[ա]պէտ յաւիտենից»[6], եւ Նմա փառք յաւիտեանս. ամէն:

** ձեռագրում՝ ճաճանցաւոր:

[3] Գաղատ. Բ 16:

[4] Գործք Գ 22:

[5] Երեմ. Ժ 10:

[6] Եբր. Թ 11:

ԵՂԻՇԵ

ԽՐԱՏ՝ ՄԵՆԱԿՅԱՑՆԵՐԻՆ*

Մարդիկ, որ մարմնի մեջ [ապրում] են և իրենց անձը կամովին հանձնում են աստվածապաշտության, տակավին պատանի՝ խոկում և կրթվում են վշտամբերության մեջ, հեռանում են հայրենի բնակավայրից և ապրում անշեն անապատում. փախչում են ոչ թե նախանձոտ ու չարամիտ աղքատների ամբոխի պես, այլ՝ որովհետև աշխարհը տեսնում են չարիքի մեջ. խույս են տալիս խորշեր ու անապատ վայրեր:

Հարավային կողմում հաճախ տեսնում ենք այրերի բազմություն՝ առանց կանանց միաբանության, որոնք իրենց համակամությամբ և լեզվով մեկտեղվել են մի վայրում, ժողովվել ինչպես իրենց հայրենի գավառում, բնակվում են երկու-երկու կամ երեք-երեք և կամ սրանցից ավելի: Եվ շինում են իրենց խցերը իրարից զատված. բարակ պատերը՝ ցրտից և նրա վրա ձեղունը՝ արեգակից պաշտպանվելու համար, հատակը՝ անպաճույճ՝ խոտեղեն անկողիններով ծածկված: Եվ քանի որ մեր բնությունը թաքնվող

* Աշխարհաբար թարգմանությունն՝ ըստ հետևյալ հրատարակության. «Սրբ. հօրն մերոյ Եղիշէի վարդապետի մատենագրութիւնք», Վենետիկ, 1859, էջ 159—165:

Հ. Հ. ՔՅՈՍԵՅԱՆ

է, և սիրում է (իր) մերկությունը ծածկել, այսու նրանք օգտագործում են անպաճույճ և խիստ աղքատիկ հանդերձներ. ամռանը՝ անթև և ձմռանը՝ երկարաթև կամ կրում լոկ մի վերարկու: Մանավանդ խմբովին անդադար պաշտամունքի պահին՝ խնդությամբ հոգևոր երգ են մատուցանում բոլորի Հորը: Կանգնած մեկ մեկու առջև, իրենց աչքերը հակած ներքև, ոտքի ծայրերին նայելով՝ կարծես բոլորը մի կետի են սևեռում իրենց հայացքը. աջ ձեռքը ծնոտին դրած և ձախը՝ կրծքին: Այսպես եմ կարծում՝ ուսած լինելով անապատաբնակ հայրերից. մարմնի մեջ պատվականագույն բաները երկուսն են՝ կենդանականն ու խոհականը, որոնք երկուստեք մեկ մեկու են սպասավորում. կենդանականին զայրույթն է հակառակ, իսկ խոհականին՝ արտաբերական բանը: Արդ. ձախով, երասանակը ձեռքն առած, զայրույթն է սանձահարում և աջ ձեռքը՝ աջ ծնոտին՝ խոհականին է սպասավորում՝ հսկելով խոսքի արտաբերման դուռը, որպեսզի այլախոհությունը չխառնվի ուղիղ փառատրությանը: Եվ այսպիսով, երկուստեք նահանջում են բոլոր զգայությունները· աչքերը մնում են ուղիղ՝ տեսության մեջ, ականջները՝ զգաստ՝ լսողության, միտքը՝ սուրբ՝ իմաստության և մնացյալն՝ ըստ կարգի:

Եվ այսպես հաստատված ու օրինակարգված, բոլորը վեցթևյան սերովբեների նման խմբված, անդադար ձայն են հնչեցնում վերառաքելով, և եռաստիճան օրհնություն են հյուսում ի նշան Արարչի հետ միաբանության: Ամբողջ օրը անցկացնում են երգերի քաղցրությամբ, հագենալով և զմայլվելով երկնային կերակուրներով՝ (հոգևոր) լրումով հասնում են երեկոյան ժամին: Եվ քանի որ մարմին ունեն ըստ մեր զգայական բնության, ուտում են, որպեսզի չքաղցեն, և ըմպում, որպեսզի չծարավեն:

Արդ. դու, երբ լսես նրանց ուտելու մասին, մեր (ուտելու) նման մի հասկացիր. քանզի նրանց հացը անպաճույճ է և բանջարը՝ վայրենի, որ աղով են համեմում, ու ջուրը ականակիտ, որ ամպերի բույլը հավաքում է ջրհորում: Սակայն այս նույնիսկ երբեք տվնջյան պահին չեն ընդունում՝ դարմանելով մարմնի պետքերը. այլ, միասնաբար պահելով բովանդակ օրը, տեղի են տալիս արևամուտին, ձգում, երկարում են երեկոն, մինչև աստղերն իրենց կայաններում պայծառանան, կարծես գոհանում են, միաբերան ասելով. «խավարային ժամին խավարային կերակուրը տանք խավարային մարմիններիս»:

Եվ այս ասելով, բարձր ձայնով փառաբանում են Սուրբ Երրորդությանը, խնդալից ուրախությամբ հավաքվում յուրաքանչյուրն իր տեղում: Եվ, ինչպես ասացինք, ուտում են հաց և զոպա (ծոթրին) և ըմպում սառնորակ ջուր: Քանի որ կան նրանց մեջ փափկակյաց ծերունիներ, (նրանց) մատուցում են տաք ջուր, որը և բարեխառն են անվանում, իսկ գինի և կամ այլ զանազան բաներ չկան նրանց սուրբ միայնարաններում:

Եվ անպաճույճ ընթրիքը ավարտելով, ասում են. «փառք Քեզ Տեր, փառք Քեզ Թագավոր մեր, որ ուրախության կերակուր տվիր, լցրու մեզ Սուրբ Հոգով, որպեսզի Քեզ հաճո լինենք և չամաչենք, քանզի Դու հատուցում ես յուրաքանչյուրին ըստ իր գործերի»: Եվ այսպես. խաչակնքելով իրենց՝ տրրվում են թեթև քնի, որպեսզի չմարված կերակուրով մարմնի գեղեցիկ շինվածքը չավերվի: Նաև, երբ բոլորը քնում են և հոգևոր երազ են տեսնում, հետո երազը մեկնում են, ինչպես սուրբ մարգարեների խոսքերը:

Եվ հետո, բոլորը արթնանալով, շրջան են կազմում. ոչ հակառակաբար և ընդդիմակա, (այլ) քաղցր հավանությամբ ու հեզ հանդարտությամբ: Խըմբերի առաջնորդները, հնչեցնելով, ձայն են արձակում՝ հոգևոր երգը քաղց-

բանուշ նվագի փոխարկելով, իսկ կրտսերագույնները, ձայներին ունկնդիր, խառնվում են յուրաքանչյուր բարբառումին՝ հարմարելով և կազմելով հնչման ներդաշնակություն. իբրև թե մի բերանից է բովանդակ բազմության ձայնը հնչում: Եվ այսպես երկարելով ձայնավոր պաշտամունքը, բոլորը ծնրադրում են, աղոթում լռությամբ, և աղոթքի առաջնորդի նշանով, կանգնելով, բոլորը փառք են մատուցում:

Եվ կատարելով տվնջյան պաշտամունքը, նախընտրելի են համարում կեսգիշերին վեր կենալ ու մինչև առավոտ աղոթել և ընթերցել Սուրբ Գրքերը, իսկ ովքեր վարդապետելու շնորհ ունեն, (Սուրբ Գիրքն) են մեկնում՝ ի միսիթարություն լսողների: Պատմում են աշխարհի՝ ոչնչից ստեղծված լինելու մասին և կարգելով մի առ մի, Սուրբ Գրոց վկայությամբ, բարի խրատներ են ուղղում ժողովականների լսելիքին: Եվ այսպես ուսուցանելուց հետո ունկնդիրները մոռանում են նույնիսկ ամենայն աշխարհական բաները և բոլորովին չեն հիշում կերակուրի և ըմպելիքի պետքը: Այսպես ուրախանալով Աստծո սիրո մեջ, նույնիսկ իրենց չհամարելով մարմնի մեջ, այլ՝ երկնքի, և հեշտությամբ անցկացնում են գիշերի ամբողջ երկարությունը մինչև առավոտ, քանզի սոսկացել են երկրից և հագել երկինքը: Մահն ամաչում է նրանց դռների մոտ և դժոխքը դառնանում նրանց իջնելու պահին: Նրանց կյանքը աշխարհի աղոթքի դռներն են և նրանց ոսկորները բոլոր ապավինողների գանձն են: Նրանց ձայնը բոլոր ծույլերի հորդորիչն է, և նրանց գործը՝ բոլոր կամեցողների վարդապետությունը. դասակից են հրեշտակներին և օթևաններն են Սուրբ Երրորդության:

Արդ. այս բոլորը իմանալով, եղբայրներ, մեզ պարտ է փութալ և, մեր անձերի մեջ դնելով սրբության նույն նախանձը, նմանվել աշխարհից զատված բազմագունդ միայնացյալներին և դեպի երկրավորների ախտից ազատվերին քաղաքամայրը դիմողներին, քանզի (երկրավոր ախտերը) ընկերակից են մեր բնությանը, որը զորացնում է մեր տկարությունը: Միայն կամեցիր, ձգտիր հավատով, հուսա, սիրիր և կարող ես ճաշակել այնպիսի նահատակությունը: Քանզի ոչինչ է ժամանակավոր չարչարանքը այն կյանքի համեմատ, որ պատրաստված է այնպիսի ճգնողների համար:

Հույժ երկյուղում եմ մեր ծուլությունից, գրեթե բոլորին տեսնում եմ երկրավոր ստացվածքի մեջ թավալված: Իսկ արդ. իմ բնությունս արդյո՞ք կըշտամբելով չի հանդիմանում ինձ. թե մերկ ստեղծվեցի, և թե դրախտում զետեղվեցի մերկ, թե՝ մերկ դուրս եկա այնտեղից, և թե՝ մերկ ծնվեցի, և թե՝ այնտեղից մերկանդամ հողն եմ մտնելու: Արդ. եթե այստեղից ոչինչ չենք կարող տանել, ինչո՞ւ ենք այս աշխարհի (խավարում) թարթափում: Մերկացի՛ր, սոսկա (չար խորհուրդներից), ո՞վ միայնակյացդ, թշնամուն ընդունող (պտուղներով ծանրաբեռն) ամրաթավ անտառ մի եղիր. գուցե մոտիկ մի վայրում դարան մտած՝ քո վրա արշավի կողոպտելու և քեզնից երկրավոր գանձը խլելու: Բավական համարիր քեզ տերունական կանոնը. երկրավորներից և ոչ ոք չի կարող երկու տերերի ծառայել, որ, առանց միջնորդի և մեկնության, հայտնագույնս ցույց է տալիս. «Չեք կարող դուք, ասում է, հաճո լինել Աստծո և Մամոնայի» (Մատթ. Զ 24, Ղուկ. ԺԶ 13):

Եվ արդ· ես մեր աշխարհում տեսնում եմ, որ այդպիսի աղետից և ոչ ոք զերծ չէ: Հակառակ իմաստով ենք մեկնաբանում գեղեցիկ գրվածքները. ուխտավորության պատճառով հեռացանք սուրբ ծնողներից և ստեղծեցինք բազում օտարոտի հայրեր. որը պատվի էր արժանի, անարգեցինք և, որին իրավունք չունեինք մեծարելու, (նրանով)՝ մեր աղետների ախտով իսպառ

լափվեցինք: Ազատվեցինք արքունի հարկերից, որոնք առանց մեղքի հարկադրանքի էին և մտանք հարկադիր ստացվածքի մեջ, որ լի է անառակ ագահությամբ: Զբարձրացանք սուրբ հարսանյաց առագաստը, և արարեցինք մեզ (համար) բարձրագահ մահիճներ առավել քան աշխարհինը: Փափկանում ենք հարմար անկողիններում և, բովանդակ գիշերը թափառելով, կոծում է մեր միտքը աղտեղի խորհուրդների մեջ:

Մեր ոտքի կոշիկները հանդիմանում են մեզ, թե մեր ճանապարհները սուրբ չեն: Մեր հանդերձները աղաղակում են մեր գործերի մասին, թե մերկ ենք երկնավոր զգեստներից: Մեր երիվարները ցույց են տալիս մեզ, թե չենք հափշտակվելու օդով Տիրոջն ընդառաջ: Մեր ապարանքի շինվածքները հայտնում են, թե մենք չունենք անձեռագործ տաճար երկնային, ուր մտնելու են երկրավոր ախտից բոլոր սոսկացողները: Մեր անդաստանների կալվածքները կշտամբում են մեզ, թե բաժին չունենք երկնավորների վիճակում:

Անարգ և անհագ եղանք կերակուրների մեջ և խորհուրդներն ու մըտքերը պղտորող գինին խմեցինք առանց չափի: Խոր քնի մեջ ենք ննջում բոլորս, և ճշմարտությունը մեզ երազ է թվում: Փակ են մեր մտքի աչքերը տեսական խորհուրդների համար և անհագորեն պագշտոված՝ աշխարհային կյանքը դիտելու համար: Խցել ենք մեր լսելիները սուրբ ընթերցումների առջև և ունկնդիր ենք մեր խաշների բառաչմանը: Սուրբ Հոգու անուշ բուրումունքը մեզ չի հասնում, որովհետև ախտալից աշխարհի յուղը սիրեցինք: Մեր ոգիների քիմքերը չճաշակեցին երկնային կերակուրը, որովհետև մեր անձը պարարտեցրինք զանազան խորտիկներով: Մեր դեմքի գույնը մութ է, որովհետև մեր երեսները չզվարթացան արքության խորհուրդներով: Մեր մարմնի անդամները ցավալից են, որովհետև մեր մարմիններից առաջ մեր ոգիները ախտավորեցինք: Ծեփված գերեզմանների նմանվեցինք մեր անձերով (հմմտ. Մատթ. ԻԳ 27), որովհետև Սուրբ Հոգու շնորհից ունայն ենք:

Այս պատճառով բոլոր չարիքները պատուհասեցին մեզ. (տակավին) մեր կենդանությանը՝ տեսանք մեր անձերի դիակնացումը: Մեր քաջ նահատակներն ընկան պատերազմում և սուրբ քահանաները մեր խողխողվեցին անօրենների ձեռքով, գեղեցիկ երիտասարդները զոհվեցին սպանվելով և բազում կույսեր գերեվարվեցին, փափկասուն կանայք այրության տառապանքով տառապեցին, և բազում որբեր դառնապես կոծում են: Ազատ եկեղեցին հեթանոսների ծառայության տակ ընկավ և նրա սուրբ քահանաները գանահարվում, չարչարվում են անօրեն հարկահանների կողմից: Վերացել է աշխարհի ողորմությունը և յուրաքանչյուրի մտքից հեռացել է գութը: Երկինքը վերևից բարկացել է, և երկիրը ներքևից տատանումով երերում է:

Մեր շինվածքները մեր դիակների գերեզմանները եղան (հմմտ. Սաղ. ԻԸ 12) և մեր ձեռքերի վաստակները տապալվեցին մեր վրա: Պայթեց ու պատռվեց գետնի թանձրությունը և բազում մարդիկ գահավիժեցին: Զապապատվեց գետնի հորը և ոչ՝ քույրը եղբորն ակնկալեց, և ոչ էլ կանանց ձայնը լսեց որդին հորը և ոչ՝ քույրը եղբորն ակնկալեց, և ոչ էլ կանանց ձայնը լսեցի՝ նորածինների, որովհետև սովը հուսաբեկեց նրանց բերանը: Հզորները հանկարծակի խորտակվեցին ինչպես Լիբանանի բարձրադալաց մայրիները, բարկության հնձան եղան և ճմլվեցին բոլորը որպես ողկույզը ոստերի տակ, գինու փոխարեն անմեղների արյունը ցայտեց մեր հանդերձների վրա: Ավելի քան լեղի դառնացավ կերակուրը քիմքին մեր, և քացախի վերածվեց սուրբ ըմպելիքը մեր: Գանահարվողների հետ գանահարվում էինք հոգով և մարմնով մեր, և մեռյալների հետ մահը ճաշակեցինք: Արդ. միթե՞ մեր ծուլության պատճառով չեն աշխարհի մեջ մուտք գործել չարչարանքները:

Օ՜ն, ուրեմն, հեռացիր աշխարհից, որ վաղ ես արթնացել, բաժանվել սրա աղետներից, թոթափելով ձերբազատվիր ախտալից աշխարհիս կեղևներից: Ընթշամարտիկի նման մերկացիր, օծվիր Քրիստոսի յուղով, որպեսզի ախոյանի ձեռքերը չկառչեն քեզնից: Իսկ արդ. եթե հեթանոսները, որոնք փարեցին տեսական իմաստությանը, ոչ միայն ստացվածքներից, այլև՝ օրինավոր կերակուրներից հրաժարվեցին, սակավ և անպաճույճ ըմպելիներով բավարարեցին իրենց անձը և, իրենց կյանքի ավարտին, առաքինի մահով վախճանվեցին, ապա որչափ ավելի մեզ հարկ է նմանվող լինել Քրիստոսի սիրելիներին, որոնք իրենց անձը հրեշտակակրոն դարձրին՝ խառնելով իրենց վերնոց գնդերին:

Արդ. գանք նաև մենք, ո՜վ միայնակյացներ, ըստ օրինի թշնամյաց, մըտնենք մեր կալվածքը իբրև օտար երկիր, թշնամու արմատախիլ ծառատունկերը կոտորենք, իբրև գերեվարված (իր) տանք մեր ինչքերը նեղյալներին՝ ոչ թե ազգականներին ատելու պատճառով, այլ՝ որպեսզի սիրենք աղքատներին, որոնք Քրիստոսի զորականներն ու ճշմարիտ բարեխոսներն են: Իսկ եթե այստեղ նյութին կապվես, ինքդ քեզ կմատնես անդարձ գերության, ուր (այլևս) չիք փրկագին: Փութա, փութա, աճապարիր, եղբա՛յր, փրկվել այդպիսի անողորմ գեհենից, որպեսզի կարողանաս հասնել ամրապինդ քաղաքը, ուր (այլևս) քո մեջ չի լինի կասկած կամ երկյուղ՝ խլվելու կամ գերեվարվելու:

Եվ եթե հայրերի գեղեցիկ վարդապետության հետ ընթանաս, որ վերեվում գծագրեցի քեզ սուրբ միայնակյացների վարքով, այնժամ կկարողանաս, առանց չարչարանաց ախտի, մտքի աչքը բարձրացնել, նայել և տեսնել բոլոր երկինքներից էլ ավելի վերագույնը: Երանի կտաս վշտալից կյանքի աշխարհից քաջաբար ճողոպրած անձիդ, և կխառնվես միայնակյացների երամին և սուրբ արդարների գնդին, առաքյալների կալվածում, մարգարեների բույլում, նահատակների կաճառում, հրեշտակների բանակում և անդրանիկների ժողովում, երկնքի մեծ քաղաքում, աբրահամյան սեղանակիցների մեջ, որոնք կարիք չունեն երկրային կերակուրների և ըմպելիների: Այնուհետև դու կլինես մարգարե, որ չի խնկարկվում մարմնական աշխարհում, այլ՝ թևածելով թռչում անմարմին աշխարհում և, հանգստանալով, դադարում անապական ուրախության մեջ: